թէև ուրախացայ որպէս Հայ, բայց միևնոյն ժամանակ, անհաւատալու կարծիքներ պատեցին սիրտս։

Պատճառ երևակայացրեցի իմ մէջ այդպիսի մի փոքր ժողովրդոց մէջ երկսեռի Դպրոց, և քահանայ ուսումնասիրութեամբ վառուած, կարելի՞ է արդեօք։ Վասն զի մեր արժանապատիւ քահանաներից մեծ մասը, միմիայն իրենց հարկաւոր անձնական օգտին համար են զբաղուած, և ոչ թէ Դպրոցներ հաստատելու ելն ելն։

Վերջապէս սրտիս կարծիքներ փարատելու և ստուգելու համար ամսոյս 19ին փութացայ ի քաղաքամասն Նորգ, այցելութիւն անելու Դպրոցներին։ Նախ գնացինք տղայոց Դպրոցը, ուր տեսանք, որ Հայոց լեզուի ուսուցիչ Պ. Բ. Տէր Յովհաննեսեանցը, դաս էր խօսում. նայելով ուշի ուշով Նորա դասախօսութեանն վերայ մի ժամուշափ պէտք է ասել ճշմարիտ հոգւով, որ պարոն վարժապետի Նոր գեղեցիկ ոճով դասախօսութիւնը շարժեց իմ համակրութիւնը, որև արժանի գովասանութեան. որովհետև մեր Հայոց լեզուի վարժապետների մէջ, համարձակ կասեմ, որ շատերը չգիտեն դասախօսութեան ձևերը. այլ լաւ գիտեն բռնութեամբ իշխել խեղճ աշակերտաց վերայ։ Դասախօսութիւնից յետոյ, սկսեցինք նշանակած ուսանելի առարկաներից հարցանել աշակերտներից, որոնցից ստացանք գեղեցիկ պատասխաններ. նախանձելի յառաջադիմութիւն կտեսնուէր աշակերտաց մէջ. որով յայտնապէս երևում էր վարժապետի անխոնջ ջանքը։—Իսկ Ռուսաց լեզուի մէջ, թոյլ էին գտանվում, վարժապետաց ամենամիս փոխուելու պատճառաւ։

Հարկաւոր եմ համարում նշանակել այս տեղ ուսանելի առարկայքը։

Հայոց լեզու

1. Ընթերցանութիւն թարգմ. ի գրաբարէ յաշխարհաբար
2. Քերականութիւն
3. Կրօնագիտութիւն
4. Ազգային Պատմութիւն
5. Սրբազան պատմութիւն
6. Եկեղեցական արարողութիւն
7. Վայելչագրութիւն

Ռուսաց լեզու

1. Ընթերցանութիւնն թարգմանութեամբ
2. Թուաբանութիւն
3. Բաղադրութիւն
4. Վայելչագրութիւն։

Երդարև բարեշնորհ Տէր Պողոս Հայրն էսկզբնապատճառ Դպրոցաց արժանընտիր ժողովրդոց նիւթական օգնութեամբ և նորա հսկողութեամբն է պահպանուում, և որը ձրիաբար վարում է տեսչութիւնը արժանապէս։ Գովասանութեան արժանի են և Պ. Հոգաբարձուքը։

Փոքր ինչ հանդստութիւնն առնելէն ետքը յիշեալ վարժապետի մօտ, գնացինք Օրիորդաց Դպրոցն. ուր գտանվում էին 24ի չափ ուսանող օրիորդներ։ Այս տեղ ևս քանի մի բաներ հարցրեցինք իրենց ուսանելիքներից, այն է—Կրօնականերից, Հ. Պատմութիւնից և լեզուագիտութիւնից, որոց մէջ բաւականաչափ յառաջադիմութիւն նշմարեցինք. մանաւանդ նորանց մաքուր քերականութեամբ կարդալները, ու գեղեցիկ և վայելուչ ձեռագործութիւնները։ Վերջապէս սոցա այսպէս յառաջադիմութեանն շաւղի մէջ մտնելը, յիշատակութեան արժանի են կացուցանում, բազմավաստակ մայրապետ Տիկին Մարգարիտ Տէր Յովասափեանցին և համեստափայլ ուսուցչուհի Տիկին Սիրիդուխտ Մ. Մարկոսեանին, որ անոնցան վարձով կուսուցանեն կրթութիւնը և ձեռագործութիւնը. նա ևս վերոյիշեալ Բ. Տէր Յովհաննեսեանցին՝ որ կպարապէ միւս առարկաներով։

Օրիորդաց ուսանելիք.

1. Ընթերցանութիւն թարգմ. ի գրաբարէ յաշխարհաբար. 2. Կրօնագիտութիւն. 3. Ազգային պատմութիւն. 4. Լեզուագիտութիւն. 5. Ձեռագործութիւն. 6. Երգ. 7. Վայել ադրութիւն։

Վերջ ամենայնի նուիրելով մեր սրտի խորին շնորհակալութեան յարգանքը Պ. Բ. Տէր Յովհաննեսեանցին և վարժապետուհեացն դարձայ տեղս։

Այս միայն ասելով, որ Նորգայ բարեսիրտ ժողովրդոց այժմեան ուսումնասիրական եռանդը արդէն իսկ ցոյց է տալիս իրենց ապագայի յոյսեր։

Ուստի Նորգայ ժողովրդոց կխնդրենք, որ իրենց ուսումնարանները հաստատ և ֆիմնաւոր պահեն, ամեն ուսումնական միջոցները և պիտոյքները հոգալով։ Ի վերջոյ չեմ կարող չյիշել այս տեղ և բարեկան Պողոս Աւագ քահանայի ճշմարիտ մարդկութիւնը, եռանդը և մեր ուղղափառ կրօնի սիրով վառուած հոգին, որ թողած իւր անձնական շահը պարապած է միայն Նորգայ ուսումնարանաց վերայ։ Ներեցուած տայ, որ այդպիսի քահանաներ շատ լինին մեր ազգի մէջ։

Մինաս Մինասեան։

1871 թվականի Մայիսի 22ին
Ի Քրիստոն

Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ՍԻՎԱՆ.

Ի 24-ն ամսոյս յաւուր Հինգշաբաթուջ Ս. Կաթողիկոսն ամենայն Հայոց առտուանց մեկնեցաւ աստի ի Ս. Էջմիածնէ, և գիշերն անցուցանելով Մերեան, յաջորդ օրը (ի 25-ն) ընդ երեկս հասաւ ի Ս. Վանան Կէվանու, ուր պէտք է մնայ առ ժամանակ մի յօդափոխութեան։